



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

26 ապրիլի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Պողոսյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Գայանե Աշուղյանի դիմումով գործը
քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ քաղաքացի Գայանե Աշուղյանը 04.04.2014թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

1. ՀՀ Սահմանադրության 18 և 19, 101, 3, 20, 21, 22, 103-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության և/կամ 426.2-րդ հոդվածի 4-րդ ենթակետի և/կամ 426.4-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները:

2. Դիմողը գտնում է, որ այն դատական ակտերի վերանայման հետ կապված, որոնցով սահմանադրական դատարան կամ Եվրոպական դատարան դիմող սուբյեկտների նկատ-

մամբ կիրառվել են քրեական իրավունքի նյութական և դատավարական նորմեր, և դրանք սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ կոնվենցիոն իրավունքներին հակասող՝ վերանայման ժամկետի սահմանափակումը կամ ժամկետի ավարտից հետո նման դիմում ներկայացնելը դատախազի հայեցողությանը թողնելը հանգեցնում է արդարադատության սկզբունքների խախտման:

Դիմողի կարծիքով, քրեաիրավական հարաբերությունները կարգավորող օրենքի դրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու կամ Եվրոպական դատարանի կողմից քրեական գործով անձի կոնվենցիոն իրավունքի խախտման փաստը ճանաչվելու դեպքում, դատախազին՝ իրավունքների խախտման գոհի իրավունքները վերականգնելու հայեցողական պարտականություն սահմանելը հանգեցնում է անձի՝ սահմանադրական կամ Եվրոպական դատարան դիմելու իրավունքի խախտման և այդ իրավունքն ապահովելու՝ պետության պոզիտիվ պարտականությունը սահմանող սահմանադրական դրույթների խախտման:

Դատական կազմը, ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 69-րդ հոդվածների պահանջներով՝ գտնում է, որ անհատական դիմումի հիման վրա գործը սահմանադրական դատարանի կողմից պետք է քննության ընդունվի մասամբ:

3. Դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ վիճարկվող դրույթներից՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը դիմողի նկատմամբ չի կիրառվել: Ճիշտ է, համապատասխան դատական ակտերում այդ դրույթը վկայակոչված է, սակայն «կիրառում» հասկացությունը ենթադրում է որոշակի իրավական հետևանքների առաջացման անհրաժեշտություն:

Դիմողի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից վիճարկվող դրույթի կիրառումը՝ որպես անհատական դիմումին ներկայացվող պայման, ի թիվս այլնի, նախատեսված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 17.03.2009թ. ՄԴԱՌ-21 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական

կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

Հետևաբար, այս առումով առկա է անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը **մերժելու**՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմք:

4. Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2-րդ հոդվածի 4-րդ ենթակետի և 426.4-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներին, ապա դատարանը գտնում է, որ նշված դրույթներով նախատեսված իրավակարգավորումների համաձայն՝ նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելու իրավունք, ի թիվս այլ սուբյեկտների, տրված է նաև գլխավոր դատախազին և նրա տեղակալներին:

Բացի դրանից, նոր հանգամանքի հիմքով դատական ակտերը վերանայելու համար բողոք բերելու համար օրենսդրությունը նախատեսել է որոշակի ժամկետ, մասնավորապես՝ 3 ամիս այն պահից սկսած, երբ բողոք բերող անձն իմացել կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին: Խնդրո առարկա գործի շրջանակներում իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանության արդյունքում նոր հանգամանքի հիմքով դատական ակտը վերանայելու բողոք ներկայացնելը դիտվել է որպես դատախազին՝ օրենքով վերապահված հայեցողական լիազորություն, որը նա կարող է և չիրականացնել:

Ինչ վերաբերում է ժամկետային սահմանափակմանը, հատկապես Եվրոպական դատարանի որոշումների պարագայում, նման իրավիճակը կարող է լուրջ խոչընդոտներ ստեղծել նոր հանգամանքների հիման վրա խախտված իրավունքները վերականգնելու համար:

Դատական կազմը գտնում է, որ առկա չեն դիմումի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2-րդ հոդվածի 4-րդ ենթակետի և 426.4-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների մասով քննությունը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,

- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,

- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերով և 69-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Քաղաքացի Գայանե Աշուղյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության դրույթի մասով՝ **մերժել:**

2. Քաղաքացի Գայանե Աշուղյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.2-րդ հոդվածի 4-րդ ենթակետի և 426.4-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների մասով՝ **ընդունել** քննության:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

26 ապրիլի 2014 թվականի
ՍԴԴԿՈ/2-4